

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
հանրապետական փուլ – 2021

9-րդ դասարան - 120 րոպե

N 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր հայրապետի օրոք գումարվեց Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովը. (0,5 միավոր)
- | | |
|-------------------------|----------------------|
| 1) Ս.Գրիգոր Լուսավորիչ | 3) Ս.Ներսես Ա. Պարթև |
| 2) Ս.Արիստակես Ա. Պարթև | 4) Ս.Սահակ Ա. Պարթև |
2. Ի՞նչ էր Քրիստոսի կողք խոցող հռոմեացի զինվորի անունը. (0,5 միավոր)
- | | |
|--------------|-------------|
| 1. Փիլիպպոս | 3. Ղեբեոս |
| 2. Ղուկիանոս | 4. Սարտիրոս |
3. Սալահունյաց գավառի իշխան Սուրենի որդու՝ Ս. Թեոդորոսի մարմինն ամփոփում են. (0,5 միավոր)
- | | |
|------------------------------|----------------------|
| 1) Սեղմնուտի ձորակում | 3) Թզազարակում |
| 2) Դարբնոց քար կոչված տեղում | 4) Ծաղկոտն լեռներում |
4. Որտե՞ղ է գտնվում Հայ Առաքելական եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդանիստ եկեղեցին. (0,5 միավոր)
- 1) ք. Հրազդան
 - 2) ք. Եղվարդ
 - 3) ք. Ծաղկաձոր
 - 4) ք. Աբովյան

N 5-9

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. Օրթոդոքս եկեղեցու ընդհանրական առաջնորդին անվանում են՝ (1 միավոր)
-
6. Ո՞վ էր Ամենայն Հայոց կաթողիկոսը Մեծ եղեռնի տարիներին: (1 միավոր)

7. Ո՞ր կաթողիկոսն էր Սսի ընդհանրական կաթողիկոսական աթոռի վերջին գահակալը:
(1 միավոր)

8. Ո՞վ էր Երուսաղեմի հայոց առաջին պատրիարքը՝ (1 միավոր)

9. Դանիել կաթողիկոսը 1808 թ. մայիսին հրավիրում է մի ժողով, որը ստանում է կամ «Կառավարիչ Ս. Ժողով» անունը:
(1 միավոր)

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

10. Կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց վերաբերող տեքստին.

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Եղիազար Ա. Այնթափցի
2. Աբրահամ Գ. Կրետացի
3. Նահապետ Ա. Եդեսացի
4. Ղուկաս Ա. Կարնեցի

1	
2	
3	
4	

ա. Մեծ ջանքերի գնով նա կարողացավ բարձրացնել Մայր Աթոռի հեղինակությունը և հաստատել կաթողիկոսական միանձնյա իշխանություն, վերականգնել Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ:

բ. Նա խրախուսել է ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արդության-Երկայնաբազուկի, կոմս Հ. Լազարյանի, հնդկահայ մեծահարուստ Շ.Շահամիրյանի և մյուսների ազատագրական ձեռնարկումները, անգամ համակրանքով արտահայտվել «Որոգայթ փառաց» երկասիրության մասին:

գ. 1735 թ. նա ընծաներով ընդառաջ գնաց պարսից Նադիր խանին և այդ ձևով Մայր Աթոռն ու Հայաստանն ազատեց ավերածություններից ու կողոպուտից:

դ. Իր տասնամյա գործունեության ընթացքում նա զբաղվեց շինարարությամբ՝ կառուցեց Մայր Տաճարի իջման Ս.Սեդանը և երկու խորանները, նորոգեց բազմաթիվ եկեղեցիներ:

ե. Նրա օրոք են կառուցվել Վաղարշապատի Ս.Շողակաթ եկեղեցին, Երևանի և Քանաքեռի եկեղեցիները:

11. Համապատասխանեցնել հայոց կաթողիկոսների անունները և նրանց գահակալման տարիները.

(0,25 X 4 = 1 միավոր)

- | | |
|---------------------------------|------------------|
| 1. Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի | ա) 1809-1830 թթ. |
| 2. Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի | բ) 1831-1842 թթ. |
| 3. Եփրեմ Ա. Չորագեղցի | գ) 1843-1857 թթ. |
| 4. Հովհաննես Ը. Կարբեցի | դ) 1858-1865 թթ. |
| | ե) 1866-1882 թթ. |

1	
2	
3	
4	

N12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

12. «Նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ.Թեորա անունով մի կոստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հռչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա, եկավ փորձելու ու վերահասու լինելու նրա իմաստությանը: Եկավ, շատ օրեր գրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև Մուրբ Հոգով լցված: Եվ երբ գնաց Կոստանդնուպոլիս քաղաքը, հարցրին նրան, թե «Ինչպե՞ս էր լուրը, ճիշտ էր, թե՞ ոչ»: Նա ասում է.«Ինչպես լսեցինք, այնպես էլ տեսանք.քանի որ նոր ոմն Գրիգոր Աստվածաբան է հարություն առել»:

1. Հայոց ո՞ր մեծանուն գործչին են անվանում «նոր Գրիգոր Աստվածաբան»: (1 միավոր)

2. Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերումը: (1 միավոր)

13. «Ճշմարիտ մարդը չի հաճոյանում ուրիշներին, արդարադատ է, արժանիքներ և փառք ու պատիվ չի յուրացնում, չի քամահրում տնանկին և չքավորին...»

1. Ո՞վ է խոսքերի հեղինակը: (1 միավոր)

2. Ո՞ր խրատից է մեջբերումը: (1 միավոր)

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ

- 14.1.** Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: (0,5 միավոր)

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: (0,5 միավոր)

Սուրբ Ծնունդ, Ծաղկազարդ, Սուրբ Հարություն (Զատիկ), Պայծառակերպություն (Վարդավառ), Սուրբ Աստվածածնի վերափոխում, Խաչվերաց:

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Շիրակի թեմ, Սյունյաց թեմ, Վայոց ձորի թեմ, Գեղարքունիքի թեմ
 - բ. Արթիկի թեմ, Սյունյաց թեմ, Արմավիրի թեմ, Արագածոտնի թեմ
 - գ. Արմավիրի թեմ, Գեղարքունիքի թեմ, Վայոց ձորի թեմ, Սյունյաց թեմ
-

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Աբրահամ Գ. Կրետացի, Նահապետ Ա. Եդեսացի, Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Սիմեոն Ա. Երևանցի, Ներսես Ե. Աշտարակեցի
 - բ. Եղիազար Ա. Այնթափցի, Ներսես Ե. Աշտարակեցի, Սիմեոն Ա. Երևանցի, Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
 - գ. Սիմեոն Ա. Երևանցի, Ղուկաս Ա. Կարնեցի, Ներսես Ե. Աշտարակեցի, Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի
-

16. Բերված մտքերից ո՞ր երկուսը Վաչագան Բարեպաշտին չեն վերաբերում: (1 X 2 = 2 միավոր)

- 1) Աղվանքի ամենանշանավոր ներկայացուցիչը ..., ով գահ բարձրանալով հրաժարվեց մինչ այդ բռնությամբ պարտադրված կրակապաշտությունից, կրկին ընդունեց իր պապերի քրիստոնեական հավատը, դարձավ նրա պաշտպանն ու եռանդուն տարածողը:
- 2) Նա կառուցել է տարվա օրերի թվով եկեղեցիներ, նրա հանձնարարությամբ Ամարաս են բերվում Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Հռիփսիմե ու Ս. Գայանե կույսերի մասունքների մի մասը:
- 3) Մովսես Կաղանկատվացին վեհ տիտղոսով է պսակում նրան՝ անվանելով իր տեր, թագավորների հավասար և թագավորի պատիվների արժանի ...:
- 4) Երկարատև նախապատրաստությունից հետո նրա հրաժանով Արցախի Աղվեն թագավորական ամառանոցում գումարվեց ժողով, որին մասնակցում+86
- 5) մ էին Արցախի, Ուտիքի և բուն Աղվանքի ազնվականները և եպիսկոպոսները:

6) Մուավիա խալիֆը «Արևելքի իշխանին» հանձնեց բոլոր արաբական հողերի կառավարումը մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան և մանավանդ հոն-խագարների հետ բարեկամական հարաբերությունների պահպանումը:

17. Շարադրանք
(2 միավոր)

1. Հայոց եկեղեցու պայքարը ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ (1903-1905 թթ.):
2. Հայոց եկեղեցու պայքարը հայկական դպրոցների վերաբացման համար XIX դարի վերջին և XX դարի սկզբին: